

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ամենայն Հայոց Կաթողիկոսության դիվանս, ի պատասխան արտասահմանից եղած հարցումներին, այսու լիազորված է հայտարարելու, թե Մայր Աթոռ ս. Էջմիածինը տեղեկություն չունի Տանն Կիլիկիո կաթողիկոսի այցելության մասին Ամերիկայի հայոց թեմերին և համայնքներին, որոնք օրինավորապես գտնվում են Ամենայն Հայոց կաթողիկոսի հոգևոր իշխանության ներքո, իրենց կազմավորման օրերից սկսած:

Անթիլիասի կիլիկյան Աթոռի գահակալի կողմից նման այցելություններ, առանց Ամենայն Հայոց կաթողիկոսի գիտության և համաձայնության, հանդիսանում են դարերից ի վեր նվիրագործված եկեղեցական կարգ ու կանոնի խախտում:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

15 մարտ 1969 թ.,
Ս. Էջմիածին